

ՄԵԼԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարուած են
իրարանշար բառին 2 կոպէկ:
Տ է Լ Է Ք օ Ն № 253:

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարւանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлиς. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք օ Ն № 253:

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անհրաժեշտ է եւրօպական կօնտրօլ. Հին մեղ-
քը պէտք է քաշուի. Ամերիկական մամուլը և հա-
յոց հարցը, Հայոց հարցը և եւրօպական մամու-
լը. Հայաստան և Մակեդոնիա. — ԵՆԻՖԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Մեր եկեղեցական փողերը. Ազգականային
ասպատակութիւնները զանգեղարում. Մատենա-
դարան. Նամակ խմբագրութեան. Ներքին լու-
րեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Աւստրիա-
յից. Արաքսի լուրեր. — ՀԵՌԱՎԻԴԱՆԵՐ. — ԲՈՐՍՍ.
— ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՄԱԿԱՆ. Սը-
կայ հարցը. Նամակ Թիւրքիայից:

ԱՆՀՐԱՎԵՏ Է ԵՆՈՐԱԿԱՆ ԿՕՆՏՐՈՒ

Հայկական ընթերցանութիւնը, որ ե-
րեք պետութիւնները ներկայացրին թիւր-
քաց բարձր կառավարութեան, ինչպէս ե-
րեւում է Կ. Պոլսից ստացած մեր տեղե-
կութիւններով, վերին աստիճանի համեստ
է և սահմանափակ:

Թէ Կ. Պոլսի հայ հասարակութիւնը, թէ
եւրօպական հայոց կօնտրօլները, որոնք
մանրամասն տեղեկութիւններ ունեն այդ
ծրագրի մասին, թէ վերջապէս անգլիական
ազատամիտ մամուլը բացարձակ յայտարա-
րում են, որ այդ աստիճանի սահմանափակ,
համեստ և սղմած ծրագիր չէ կարող
բաւականութիւն տալ թիւրքահայ ժողովու-
րի պահանջներին: Նրանք աւելի են պա-
հանջում:

Մեր նպատակը չէ այս անգամ քննադա-
տել ընթերցանութիւնը ծրագրի գանազան կէտե-
րը. մենք բաւականատեղ ենք միայն մատ-
նանիլ անելով ծրագրի մի կէտի վրա, որը,
մեր կարծիքով, ամենագլխաւորը և ամե-
նակականն է: Դա այն է, թէ արդեօք
ընդհանուր վերահսկողը, բարձրա-
գոյն քօմիսէրը եւրօպացի պէտք է լի-
նի, թէ մահաճետական, ազատ մարդ
պիտի լինի, թէ թիւրքաց սուլթանի որ և
է հպատակ:

Թիւրքաց բարձր կառավարութիւնը ա-
մեն ջանք գործ է դնում, որպէս զի բարձ-
րագոյն քօմիսէրը լինի մի մահաճետա-
կան, կամ եթէ այդ անկարելի է, և նա ան-
պատճառ քրիստոնեայ պիտի լինի, գէթ
նա լինի սուլթանի հպատակ և սուլթա-
նից կախած:

Եթէ սուլթանի այդ դիտաւորութիւնը
աջողվի, այն ժամանակ համարձակ կարելի

է ամբողջ ընթերցանութիւնը ծրագիրը և դադա-
ւարը համարել մի ֆիկցիա, մի մեռած
տառ:

Եւ յիշուի, նոյն իսկ թիւրքաց այժմեան
օրէնսդրութիւնը, թէ օրիապէս, վերին աս-
տիճանի ազատամիտ և լայն սկզբունքների վրա
է դրված, քանի որ նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ
ֆրանսիական ամենամարդասէր օրէնքների
պատճէնը: Սակայն գործնական կեանքի մէջ,
այդ նոյն ազատամիտ, մարդասէր, լայն ըս-
կզբունքների վրա հիմնած օրէնքները, շը-
նորհիւ թիւրքաց պաշտօնականների ամբողջ
կազմակերպութեան, շնորհիւ այն ֆանա-
տիկոսութեան, որ կազմում է թիւրքաց
կառավարչական սխռուէնը հոգին և զե-
կավարը. — այդ բոլոր գեղեցիկ օրէնքները
մնում են մեռած տառ, դատարկ խօսքեր...

Այն, ինչ որ պատահել է երկար տարե-
ների ընթացքում, նոյնը, անկասկած, կը
պատահի և այս անգամ... ընթերցանութիւն
գործում է իրից պետութիւնների ծրագիրը
կործնելով, սուլթանը կը խոտանայ ըն-
թերցանութիւնը, ինչպէս խոտանաւ և 16
տարի առաջ, բայց իրօք այդ ընթերցանութիւնը
կը մնան թղթի վրա և ամբողջ երկիրը կը
շարունակի հարստահարվել, ճնշվել, արիւ-
նաբամ լինել, եթէ եւրօպական չի ունենայ
իր մշտական կօնտրօլը, եթէ չի լինի մի
անկախ, սուլթանից ոչինչ կախում չունե-
ցող եւրօպացի, որը պարտաւորված լինէր
երեք պետութիւնների առաջ՝ հսկել, որ
ընթերցանութիւնը ամեն մի յօդուածը, ամեն մի
տառը գործադրվի երկրի բոլոր անկիւննե-
րում...

Առանց եւրօպական կօնտրօլի, ընթերցա-
նութիւնը, ինչքան էլ նրանք լայն լինեն, ոչինչ
միտք չունեն: Առանց եւրօպական անկախ
վերահսկողի, սուլթանից կախված քրիս-
տոնեայ նահանգապետների, ինչքան էլ նը-
րանք բարի ցանկութիւններ չունենան, —
ոչինչ չեն կարող անել: Սաւաբուլը կը լինի
նրանց ղեկավարը, ուղեցոյցը, տօն տուողը...

Եթէ երեք պետութիւնները, կամ ամ-
բողջ եւրօպական վճռել են մի կողմ թողնել
Հայաստանի ինքնավարութեան դադարը,
եթէ երեք պետութիւնները որոշել են բա-
ւականանալ այժմեան սահմանափակ ծրա-
գրով, այն ժամանակ աւելի ևս անհրա-
ժեշտ է դառնում, որ ընթերցանութիւնը գործա-
դրութեան վրա հսկողը, բարձրագոյն քօ-
միսէրը լինի ոչ թէ սուլթանից կախված,

այլ բոլորովին անկախ մի եւրօպացի, պա-
տանաւատու միմիայն երեք պետութիւն-
ների առաջ, և միանգամայն ազատ թիւր-
քաց հրամաններից:

ՀԻՆ ՄԵՂՔԸ ՊԵՏԻ Է ՔԱՆԵՆ

Ամեն անգամ, երբ մենք տեսնում ենք
Անգլիայի համակրութիւնը դէպի հայոց
հարցը, դէպի թշուառ թիւրքահայերը,
մենք ակամայ յիշում ենք Բերլինի կօնգրէ-
սը, որտեղ նոյն Անգլիայի ներկայացուցիչը
լորդ Բիկօնսֆիլդը հանդէս եկաւ իբրեւ թիւր-
քիայի կատաղի պաշտպան, իբրեւ Սան-Ստե-
ֆանայի դաշնակցի ոչնչացող:

Եւ յիշելով այդ անցեալը, յիշելով այն
ուժգին պաշտպանութիւնը, որ Մեծ-Բրի-
տանիան ցոյց տուեց քրիստոնեայ հայերին
ճնշող, հարստահարող իշխանութեանը,
մենք դալիւ ենք այն եղբայրացութեան, որ
Անգլիան դեռ շատ պէտք է անի, դեռ շատ
պէտք է աջակցի հայերին, որպէս զի քա-
ւէ իր հին մեղքը, մոռացնել տայ իր հին
արարքները:

Միմիայն մարդասիրական տեսակէտը, մի-
միայն քրիստոնեայ մի ճնշված ազգութեան
պաշտպանելու զգացմունքը չէ, որ պէտք է
դրդի Անգլիային գործելու հայոց հարցում,
այլ և այն պատմական սխալը, որ
գործեց նա սրանից 16 տարի առաջ, և
որը պէտք է ուղղել, քաւել, մոռացնել
տալ...

Ձուր են կարծում մի քանի եւրօպացի
և ռուս հրապարակախօսներ, թէ Անգլիա-
յի համակրութիւնը և աջակցութիւնը
ծայրահեղ է և չափազանց: Բոլորովին ոչ
Անգլիական ազգը շատ լաւ գիտէ, որ եթէ
այսօր թիւրքիան յայնքան զինուորի կեր-
պով մերժում է հայկական ընթերցանութիւնը,
դրա գլխաւոր պատճառը այն պաշտպա-
նութիւնը և հովանաւորութիւնն է, որ երկար
տարիների ընթացքում ցոյց տուեց Մեծ-
Բրիտանիան օսմանեան կառավարութեանը,
ծածկելով այդ երկրի մէջ կատարվող դա-
շնութիւնները, և հովանաւորելով Բ. Դը-
րան այլանրակ դործողութիւնները...

Այդ շատ լաւ են գգում ոչ միայն այն-
պիսի մարդիկ, ինչպէս են Դաւաթում, և
անպիկական աղատամիտները, այլ ամբողջ
անգլիական հասարակութիւնը, անգլիական

արիստօկրատիան և հոգեւորականութիւնը,
որոնք բոլորը այսօր, միաբերան և միա-
ձայն պահանջում են, որ Մեծ-Բրիտանիան
քաւի իր հին մեղքերը, ջնջի անգլիական
պատմութեան երեսից այն արատը, որ
զցել է այդ պատմութեան վրա լորդ
Բիկօնսֆիլդի իր թրքամօլ քաղաքականու-
թեամբ...

Այո, Անգլիան դեռ շատ պէտք է անի
յօդուած թիւրքաց հայերի, որպէս զի քա-
ւի իր հին մեղքը...

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՄԱՄՈՒՆԸ ԵՒ ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐԸ

Անգլիայից յետոյ Ամերիկան է այն եր-
կիրը, որտեղ շատ ուժեղ է հասարա-
կական կարծիքը և որտեղ կառավա-
րութեան գործունէութիւնը որոշվում է
է ժողովրդի տրամադրութեամբ և կամքով:
Միացեալ Նահանգներում մամուլը ստացել
է նոյն լայն և խոր զարգացումը, ինչպէս
Անգլիայում, իսկ մի քանի կէտերում նոյն
իսկ գերազանցում է:

Ամերիկական լրագրիւնները, որ առաջ
ձեռնպահ էին մնում հայոց հարցի վե-
րաբերմամբ, այժմ սկսել են մի այնպիսի
հետաքրքրութեամբ զբաղվել այդ հարցով,
որ նա դարձել է օրվայ քաղաքական ա-
մենամեծ խնդիր:

Ամերիկայի համար հայոց հարցը,
բացի ընդհանուր մարդասիրական
խնդրի լինելուց, ունի և սեփական,
գործնական նշանակութիւն: Ոչ Անգլիան,
ոչ Ֆրանսիան, ոչ Գերմանիան, ոչ Իտալիան
չունեն այնքան հայ հպատակներ, որքան Ա-
մերիկան, ուր գտնվում են բազմաթիւ հայ
պանդուխտներ, որոնք եկել են այդ երկիրը
ապրուստ գտնելու: Բայց այդ, ամերիկական
քարոզիչները ունեն բազմաթիւ քարոզչա-
կան բաժանմունքներ Հայաստանում, որոնց
շահերը նոյնպէս ենթարկված են վտանգի:

Ամերիկան արդէն դիմեց նոյն իսկ ազ-
դեցիկ միջոցի, որպէս զի ցոյց տայ, որ նա
անտարբեր չէ նայում իր հպատակների
վիճակի վրա: Միացեալ Նահանգների եր-
կու պատերազմական նաւեր խորհրդա գե-
ցին Փոքր-Ասիայի ափերում և իւրաքան-
չիւր քաղէ պատրաստ են թնդանութիւնը
շարժել, եթէ պահանջ զգացվի:

Ամերիկական մամուլը մէջ հայկական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐԱԿԱՅԻՆ

II

Մարդաբէ չը պէտք է լինել գուշակելու հա-
մար, որ երկու-երեք շաբաթից յետոյ, թիւրքաց
կառավարութիւնը, ոչինչ միջոց չունենալով մեր-
ժել հայկական ընթերցանութիւնը սահմանափակ, հա-
մեստ ծրագիրը, կը պատասխանի պետութիւննե-
րին, թէ անկարելի է այդ ծրագիրը իրադրօնել,
որովհետեւ հայերը փոքրամասնութիւն են
կազմում և ոչ մի վիլայէթում մեծամասնութիւն
չեն ներկայացնում:

Դա թիւրքերի հին երգն է:
Ամեն անգամ երբ ձայն է բարձրանում Հայաս-
տանի թշուառ վիճակի մասին, երբ թիւրքաց
կառավարութիւնները առաջ են բերում հայոց հար-
ցը, օսմանեան կառավարութիւնը նախ սկսում է
հաւատացնել, թէ թիւրքիան կատարեալ դը-
րախտ է, և ոչ մի գաղանթութիւն տեղի չէ ու-
նեցել. — բայց երբ գաղանթութիւնները ա-
պացուցվում են, և եւրօպական պահանջում է ըն-
թերցանութիւնը մոցնել, օսմանեան միմիայնները սկը-
սում են անդադար կրկնել. «Ինչպէս մոցնենք

ընթերցանութիւնը, երբ չը կայ Հայաստան, չը կան հայ-
կական նահանգներ, և ամեն տեղ հայերը կազ-
մում են բացարձակ փոքրամասնութիւն:

Եւ այդ նոյնը անկասկած կը կրկնեն և այս
անգամ:

Ամբողջ քսան տարի է, թիւրքիան այդ քաղա-
քականութեան է հետեւում, և այդ է պատճառը,
որ մի կողմից «աջակցագուլ» խաղաղով եւ-
րօպայի հետ, միւս կողմից նա յամառութեամբ
զայլթեցնում էր հայերին, ստեղծում մշտական
պանդուխտութեան հոսանք, և ընդհանրում մայր
երկրից քալած հայերի տեղերը արեւմաբլու քը-
ղերով, չէրքէզներով, զէյլէքներով...

Երբ սրանից 16 տարի առաջ Ներսէս վարժա-
պետեան ներկայացրեց ղեկավարների իր տեղե-
կագիրը, նա թւերով ապացուցեց, որ հայաբնակ
հինգ նահանգներում հայերը կազմում են մօտ 70
պրօցէնտ, իսկ ութսունական թվականներին
կազմած թիւրքաց սալնամէներով հայերը կազ-
մում են միմիայն... 17 պրօցէնտ: Եւ այդ չինձու-
կեղծ, խաբերայական սալնամէներով է ուղում
թիւրքիան հաւատացնել եւրօպային, որ Հայաս-
տանում հայեր չը կան, ուրեմն և ընթերցանութիւն
մասին խօսք անգամ լինել չէ կարող...

Ընդունենք մինչև անգամ, որ Ներսէս վարժա-
պետեանի յիշատակած 70 պրօցէնտ հայերը այժմ
չը չը կան թիւրքիայում. — բայց միթէ թիւրքիան

մոռացաւ նոյն իսկ եւրօպական ղեկավարների 81
թիւ յայտագիրը, որտեղ պարզ ասված էր, որ
հայերը, համեմատելով միւս ազգերի հետ առաւն-
ձին առաւնձին, կազմում են մեծամասն-
ութիւն:

Հայերի թիւը փոքրացնել՝ դա այժմ թիւր-
քերի միակ նպատակն է: Երբ հարկաւոր է
հարստահարել քրիստոնեաներին, այն ժա-
մանակ թիւրքիան ոչինչ խտրութիւն չէ դը-
նում հայ-լուսաւորչականի, հայ-կաթօլիկի, քրիս-
տոնեայ-յոյնի, քրիստոնեայ-ասորու մէջ. բայց
երբ հարկաւոր է քրիստոնեաների թիւը քչաց-
նել, այդ ժամանակ նոյն թիւրքիան հայ-կա-
թօլիկներ, հայ-քողղապաններ էլ հայ չէ համա-
րում, մոռանում է, որ այդ բոլորի հետ միա-
սին յոյն էլ, ասորի էլ քրիստոնեայ են, ուրեմն
և կարօտ են այն ընթերցանութիւնը, որոնք պաշտ-
պանվում են ոչ միայն յանուն հայ ժողովրդի, այլ
ընդհանրապէս յանուն քրիստոնէութեան:

Սակայն ընդունենք մինչև անգամ մի քաղէ, որ
քրիստոնեայ հայերը, յոյները, ասորիները միասին
վերցրած չեն կազմում ազգաբնակչութեան բաց-
արձակ մեծամասնութիւն. ընդունենք մինչև ան-
գամ, որ հինգ հայաբնակ նահանգներում բուն
հայերը կազմում են հազիւ 40 պրօցէնտ. սա-
կայն միթէ այդ հանգամանքը իրաւունք է տալիս
թիւրքերին կոտորել, հալածել, սպանել, հարս-

տահարել հայերին միայն այն պատճառով, որ
նրանք կազմում են ոչ թէ 80, այլ 40 պրօցէնտ:
Ինչ կասէր թիւրքաց կառավարութիւնը, եթէ Մու-
շի դաշտում կամ Վասպուրականում, ուր հայերը
աւելի են թիւով, սկսէին կոտորել, ճնշել, հալա-
ծել մահամեծախանքի միայն այն պատճառով,
որ իրանք թիւով աւելի են:

Պետական գաղափարը իրաւունք չէ տալիս ար-
դարութիւնը և վարչութիւնը հիմնել թիւի վրա,
այլ պահանջում է ապահովութիւն ամեն մի դա-
ւանութեան, ամեն մի ազգութեան իրաւունքների,
առանց նայելու, թէ որն է թիւով աւելի, կամ
նրն է կազմում մեծամասնութիւն:

Թող չը մոռանայ թիւրքիան, որ եթէ հայերը,
նոյն իսկ պրօցէնտական տեսակէտից, թիւով բա-
ցարձակ մեծամասնութիւն չեն կազմում, բայց
կուլտուրական տեսակէտից, քաղաքա-
կրթական հակումներով այնքան բարձր են
մահմետական թիւրքերից և քրիւրքերից, որ երբեք
կուլ չեն գնայ, երբեք չեն անհետանայ, — վերջի
վերջոյ յաղթող կը հանդիսանան:

Այդ շատ լաւ գիտէ եւրօպան, որ ընթերցանութիւն
է պահանջում հայերի համար: Հարկաւոր է, որ
այդ ճշմարտութիւնը հասկանայ և թիւրքիան, որ
մերժում է այդ ընթերցանութիւնը:

Խ. Մալումյան

խնդրի արձագանքը և ուսումնասիրութիւնը հիմնոված է զլրատւորապէս այն նիւթերի վրայ, որ տալիս են անգլիական լրագրիչները։ Երբ 1օնդոնի զլրատւոր լրագրիչների շնորհիւ Եւրոպայում որոշ կարծիք կազմվեց ընդդէմ թիւրքաց բռնութիւններին, այն ժամանակ ամերիկական լրագրիչները ձեռնարկեցին լուրջ կերպով ուսումնասիրել ռոտը, և սկսեցին նուիրել հայոց հարցին ոչ միայն ընթացիկ լուրերի բաժինը, այլ և առաջնորդողներ ու մեծ յոգաւածներ։ Դրանով էլ չէր բաւականանալով ամերիկական լրագրիչները սկսեցին հրապարակ հասնել իրանց սեփական թղթական ցուցիչները, որ ստացել էին թէ հայ զաղթականների և թէ բողոքական քարոզիչներին միջոցով։

Միւս անգամ առաջ կը բերենք նմաններ ամերիկական մամուլի կարծիքների վերաբերութեամբ։

ՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

I
Գերմանական «Kölnische Zeitung» լրագիրն աւսում է, որ եթէ հայոց հարցի առիթով Բ. Գուռը մերժի երեք մեծ պետութիւնների առաջարկութիւնները, այն ժամանակ կը հրաւիրվի միջազգային կոնֆերանսիս։

II
Բերլինից հեռագրում են, թէ գերմանական կառավարութիւնը խորհուրդ է տալիս Բ. Գուռը կատարել մեծ պետութիւնների առաջարկութիւնը հայոց հարցի առիթով։

III
«New York Herald» լրագիրն Կ. Պոլսի թղթականից հարցրելով է, որ Կ. Պոլսի բերտամասնական ղեկավարութեան երկրորդ քարտուղարը յանկարծ յետ կանչվեց Անգլիա և կարծում են, որ այդ փաստը կապ ունի հայկական գործերի հետ։

IV
Կ. Պոլսից հայոց հարցի առիթով հարցրելով են, որ երեք գերապետութիւնները իրանց միջամտութիւնը հիմնում են գոյութիւն ունեցող օրէնքների և որոշումների վրայ, այն է 1839 թ. հաթիւն-հիւսիսի վրայ, 1856 թ. հաթիւն-հիւսիսի վրայ և վերջինների կառավարութեան մասին երեսուն տարի առաջ հրատարակած օրէնքի վրայ։

V
«Մշակ» № 48 մէջ, բանասիրականի բաժնում տպագրված թղթականութիւնը Բաղէչի հայ բանասիրականների մասին, որը գրված էր միանգամայն արժանաւաստ աղբիւրից, տպագրված է նոյնպէս և «Daily News» լրագրի մայիսի 14-ի համարում։

Այդ թղթականութեան մէջ պարունակված սուսկայի փաստերի առիթով անգլիական պարլամենտում մայիսի 16-ին հարցադրվում եղաւ։

VI
Բէյրութից հեռագրում են Եւրոպական լրագրիչներին մայիսի 15-ից, որ ընդհանուր նահանգապետը զօրքով Բէյրութից գնացել է Սուրայ, որտեղ քրիստոնեաների և մահմետականների մէջ կուր և ծագել։ Գնաւ ճիշդ տեղեկութիւն։

ՆԱՄԱԿ ԹԻՒԿԻՄԱՅՑ

Կ. Պոլսի, մայիսի 9-ին

Երկար թղթականութիւն մը գրելու առիթ չունեմ այսօր։ Տեսնում փնտրում մը մէջ ենք ամէնքս ալ։ Եւրոպական թերթերը Պոլսի կը բերեն «բարեկարգութեան» ծրագրին վրայ տեղեկութիւններ, որոնք դժգոհ կը թողուն ժողովուրդին մէջ մասը. իսկ աւելի պաշարներն, սառն կերպով խորհողները դո՛ւր և կը կարծեն որ ասիկէ աւելին կարելի չէր ձեռք բերել, ուստի պէտք է որ ջանամք մեզի տրուածը շահագործել։ Պատրիարքարանի չրջանակներն ալ այսպէս կը մտածեն։

Պատրիարքը անհանգիստ ըլլալով երկու օր քաջուկեցաւ. իսկիւնաւոր, այսօր դարձեալ պատրիարքարան եկաւ։ Գնապանները դեռ բարեկարգութեան ծրագիրը պաշտօնապէս պատրիարքարանին չի յանձնեցին. բայց կարծեմ թէ բաւական տեղեկութիւնները լսուած են։

Եւրոպական թերթերին շատերը կը գրեն թէ «բարձրագոյն ըրոթիւրը» մահմետական մը սկսի ըլլալ և ոչ թէ Եւրոպացի մը։ Այս լուրը ճիշդ չէ և ոչ ալ սխալ։ Երբեք մէջ գրուած է «բարձրագոյն ըրոթիւր» մը, առանց որոշելու թէ եւ-

րոյն չեն ստացված անկարգութիւնների մասին մամուլի լուրերը։

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՄԱԿԵՒՈՒՄ

Բօլքարական «Знаме» լրագիր թղթականից Կ. Պոլսում տեսակցել է մի հեղինակաւոր անձի հետ և հետեւող բացատրութիւնն է ստացել հայոց և մակեդոնական հարցերի մասին։

«Սօֆիայի լրագիրներում» տարած լուր՝ միջազգային կոնֆերանսիսի հրաւիրելու մասին, ճիշդ չէ։ Եւրոպական պետութիւնները ցանկանում են խոյս տալ դրանից՝ վախենալով որ չը լինի թէ հայոց ոչ ցանկալի բարդութիւններ առաջացնի։ Խրանց տեսակէտից Եւրոպական պետութիւնները արդար են, որովհետեւ հայոց ընդարձակելով, այսինքն միաժամանակ հայոց և մակեդոնական հարցերն արժարձելով, ամբողջ հայոց հարցը կը յարկաւորեն իր ամբողջ ծառայով։ Ինչ որ վերաբերվում է Հայաստանի անցքերին, երեք պետութիւններ՝ Անգլիան, Ռուսաստանը և Ֆրանսիան արդէն ներկայացրին Բ. Գուռը այն բեֆօրմների ծրագիրը, որոնք պէտք է մոյցվեն այդ չրջանում։

«Յայտնի չէ, թէ արդեօք կընտրուի Թիւրքիան այդ նախագիծը, կամ այնպէս կը վարվի, ինչպէս որ վարվեց Եւրոպական գաղափարութիւնների ժամանակ. սովորածը այնպիսի մարդ է, որ ոչ ոք առաջադէպ չէ կարող տանել թէ ինչ ընթացք կը ընդունի։ Ոչ ոք նոյնպէս այժմ չէ կարող տանել թէ որպէս կը վարվին վերջինիս երեք պետութիւնները, եթէ Բ. Գուռը մերժի նրանց առաջարկած ծրագիրը։ Լուրեր են պատում, որ այդ դէպքում կամ կոնֆերանսիս կը հրաւիրվի կամ պետութիւնները պատերազմական ցոյց կանեն»։

Պետերբուրգի «Новости» լրագիրը իր 125-րդ համարում մի առաջնորդող նախաձեռնութեամբ հայոց և մակեդոնական հարցերին, աւսում է. «Բօլքարական մամուլը, օգուտ քարելով հայոց հարցի առիթով ներկայացրած յայտարարից, սկսել է խօսել Մակեդոնիայում մոյցվելի բեֆօրմների մասին։ Մակայն Հայաստանը Մակեդոնիայի հետ համեմատելը այնքան էլ հիմնաւոր չէ։ Ի հարկէ, կարելի է ասել, որ եթէ մեծ պետութիւնները պաշտպան են կանգնում հայերին, ինչու նրանք չը պէտք է պաշտպանեն և մակեդոնացիներին։

«Բայց հայերի դրութեան մէջ՝ թիւրքաց Հայաստանում և մակեդոնացիների մէջ՝ Մակեդոնիայում մեծ դանազանութիւն կայ։ Հայերը տանջվում են այն բռնութիւններից, որ կատարում են քիւրդերը և չէրքէզները, իսկ մակեդոնացիները ոչինչ բռնութիւններին չեն ենթարկվում, և եթէ տանջանքներ են կրում, դրանք հետանք են այն ընդհանուր պայմանների, որոնցով աչքի է ընկնում թիւրքաց վարչութիւնը»։

«Այս թէ ինչու պետութիւնները պաշտպանութեան ձեռք մեկնեցին հայերին և չեն կատարում նոյնպիսի պաշտպանութիւն ցոյց տալ մակեդոնացիներին»։

Եւրոպացի պիտի ըլլայ թէ ոչ։ Հետեւաբար, թէ Եւրոպացի կրնայ ըլլալ, թէ օսմանեան հպատակ մը, քրիստոնեայ կամ մահմետական։ Եթէ ըրոթիւրը օսմանց ըլլայ, գոգհատութիւնը ընդհանուր պիտի ըլլայ, բարեկարգութեան ծրագիրը հիմն խախտու պէտք է հասնել, և առջինիս աւելի ծանր կացութիւն մը կրնայ ծնւել։ Եւրոպացի զոմիսէր մը, որ բնաւորութեան անկախութիւն պիտի ունենայ և Եւրոպական վարչութեան վրա զաղափար ունի, անիկայ միայն այս երկրին մէջ կրնայ բան մը ընել։ Տեղացի մը, քրիստոնեայ ըլլալ թէ մահմետական, միշտ կաշկարածութեամբ ապուշ մըն է, որ աղետաբեր ըլլալէ զատ ուրիշ բանի չի կրնար ծառայել։

Սովորածը տակաւին պատասխան մը չը տուաւ թէ ներկայացուած ծրագիրը կընտրուի թէ ոչ։ Թուրքիան վաղայի յանձնաժողովը ալ կանոնաւոր գումարեւմեներ իսկ չընեն և իր նախագահը ամէն օր Սովետին պաշտօնը կերպից, այս խնդիրները միւս վրա խորհրդակցելու։ Այսօր լուր հասաւ Պոլսի թէ անգլիական նաւատորմը, 20 նոյեմբերից, հասած է Իսթիք և ի հարկին պիտի գայ Պեդիքա, որ գրեթէ ճարտանէլի բերանն է։ Հետեւաբար կը յուսացուի թէ սովետներն պատասխանը չունենալ։

Սովորածը արդէն բոլոր նախարարները, հին թէ նոր, պաշտօնի վրա գտնվող թէ ոչ, ամենքն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՓՈԴԵՐԸ

Ինչպէս յայտնի է, մեր եկեղեցիները փողերի տակոնները կազմում են մեր դպրոցների եկուսուսի մի նշանաւոր մասը։ Չենք սխալվի, եթէ ասանք թէ կան տեղեր, ուր դպրոցները պահվում են բացառապէս եկեղեցական կամ վանական փողերով, ասել է թէ՛ դպրոցի անուանական վիճակը ամբողջովին եկեղեցական դրամների հետ կապված է, հետեւաբար խիստ կոտորոն ու որովհետեւ այդ է պահանջում դպրոցի շահը։

Բայց ինչպիսի է, ծառայում են արդեօք այդ փողերն իրանց նպատակին, յատկապէս դիւրութեամբ, ուր հաշուետւութիւն գոյութիւն չունի, ուր չը կայ ծխականի ձայն և իրաւունք։ Գլխաւորաբար, պատասխանը բացառական է։ Խօսքը, անկասկած, բացառութիւնների վրա չէ։

Այժմ տեսնելը թէ ինչ են լինում և ուր են մտնում այդ փողերը։ Հօշաւաւոր վախճանաւոր միւր ընտրվում է երեցիկի կամ հազարաւոր ձու, որովհետեւ դիւրացիներն նա կապել, կաշկարանել է, և ասա իր ձեռքն է առնում դպրոցի ու եկեղեցու բողոք, որոնց արժէքը նա այնքան է հասկանում, որքան կարողան է խեղճի տունը քանդելու։ Նա ստիպւում է տալիս եկեղեցու փողերը, մտահոյները գրում է իր անունով, տակոններն ինքն է ստանում, մի խօսքով՝ վարվում է ինչպէս իր սեփականութեան հետ։

Բայց չէ որ ուսումնարանում տակաւ պիտի ստանայ։ Լրանում է ուսումնարանական տարին, ուսուցչին փող է հարկաւոր, նա տարին մի կերպ քաշ է տուել, փող չը կայ։ Գիտնի են աղային, «Փողերը խեղճերի վրա են, մի կտակ չեմ տաւցել», ասում է աղան։ Աղային, պարտաւոր և ասա աղան բարեհաճում է «իր քրոջ» մի քանի մանէթ չարտել ուսուցչին։

Վերջապէս չորս է բերում գիւղը գործակալը հաշիւ տեսնելու։ Մեր աղան իր կրթած-մարդած մտահոյներից մի քանիսը դնում է նրա առաջ եկեղեցու դրամապիսի տեղ. իսկ դրանց տեղերից կօպէկ ստանալն անգամ մեղք է։ Գործակալը չը ուր է բէջի պիսի է ընտրում կամ, աւելի լաւ է ասել, նշանակում, դարձեալ նոյն խաղը, քահանային է յանձնում—դարձեալ նոյն օյիւնը։

Գլխաւորաբար, մեր եկեղեցական փողերի քահանայը միշտ գաղափար է մտնում, եթէ ոչ, դիւրութեամբ կարելի էր ասել, թէ որքան փողեր այդ ճանապարհով անհետանում են։ Այս է պատճառը, որ վերջին տարիներում շատ գիւղերում, մանաւանդ յերմանեան նահանգում սկսել են եկեղեցու տարօրյ ամբողջ եկամուտը կատարելով տալ։ Սրա վնասների մասին խօսելն իսկ աւելորդ է։

Այդ բոլորը լաւ տեսնում է գիւղացին, և զըրոնով նա բոլորովին ասուշում է թէ դէպի դեպ-

րօքը, թէ դէպի եկեղեցին։ Այս առ ամենադըր- խաւոր պատճառներից մէկն է, որ գիւղական դպրոցներից շատերը երկու կամ երեք տարի են միայն ապրում։ Այսպիսի դպրոցների տուած օգուտը հասկանալի է՝ դրօշ է հաւատարմութիւն և անկարգութիւն է տիրում։

Յ. Սէ.

ԱՄԱՋԱԿԱՅԻՆ ԱՍՊԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՆԳԵ- ԶՈՒՐՈՒՄ

Յայտնի ազգականապէս Նարին շարունակում է իր աստատարութիւնները Զանգեզուրի դաւա- ուում, և գիւղացիների ասելով, նա դարձել է ասելի վայրագ, կատաղի և վրէժառու, քան երբ և ինչէ։ Նա անխորտակաւ սպանում, կոտորում և թաղում է։ Աղբնւում է թէ սպանում էր զնոսակի մի հարուստով, այժմ նա չարաբերով, տանջելով և անդուլթ կերպով է սպանում։ Այս դրա տարացոյցները, ապրիլ ամսի 26-ին 25 ձիաւորներով յարձակում է գործում խօջանա թուրք գիւղի վրա, այդտեղ ուրիշ մարդ ձեռ- նալով կանչում է մի թուրք բէգի։ Գուրա է գալիս ծառան, իսկոյն սպանում են և մանում են տուն, բէգի 14 տարեկան որդուն բռնում, կատար են սինի վրա, նշան են դնում և տան- ջելով սպանում։

Նոյն դիւրը յարձակվում է մի ուրիշ թուրք գիւղի վրա և կանչում է գիւղական դատաւորին, նա քնից վեր է կենում և սպանում է, որ գիւղը դրան չէրքից դուրս բերի, երկու գնտակի հա- բուսածով գետին են գործում, մանում են տունը, սպանում են օրօրոյցի մէջ կապած երեխային, հաւաքում են տան մէջ բոլոր իրերը և նախ յա- ծելով արում։ Ուղեղը են կնոջն էլ սպանել, բայց զինանքով նրա աղբարանքին ինտելեկ են, բայց ստում են, որ կուտը կտրել են և հաղիւ թէ ապրի։

Երբորդ պօլիցիական բաժնի պրիստաւը լսե- լով այդ բոլորը, ընկնում է առազանքների խմբի ետևից և քշում է մինչև Քիւրդաբաղու թուրք գիւղը (Ստանի կամուրջից 4 վերտո հեռաւո- բութեան վրա, գետի ձախ կողմում), իսկ միւս կողմից վրա է հասնում գաւառապետ օգնակա- նը, սկսվում է հրացանաձգութիւն և առազանքն- րը սպանում են մի կողակի ձի։ Գիւղացիների ասելով այդ գիւղը ամենապարմար տեղն է եղել առազանքներին ձերբակալելու համար, բայց պօ- լիցիան չէ կարողացել։

Այդ գիւղում մի դիւր անցկացնելուց յետոյ, միւս օրը խումբը, կէսօրվայ մօտերքին, Ուշ-Թա- փայ անուանած տեղով անցնելիս դէպի Վաղա- դի բիւնաները, պատահում է Շինէր գիւղացի Բալիյի անունով մի երիտասարդի, սպանում են, և ձին խլում։ Քիւրդաբաղու թուրք գիւղացիները գիւղը վերցնում են և անհետացնում, սակայն ինչպէս ասում են, Շինէր գիւղացիք մի օր անց- նելուց յետոյ գտնում են։

Այդ միջոցին կազմի գիւղացի մի հայ մարդ

Մեզի համար հետաքրքրական երեւոյթ մըն է թիւրքերուն ընթացքին փոփոխութիւնը։ Մուկ են դարձել։ Սրբին Պոլսի մէջ սկսած են հայե- լուն հետ քաղաքակրթութեամբ վարուիլ։ Պաշ- տօնատուներուն մէջ թիւրք պաշտօնեաները շատ սիրով են հիմա իրենց հայ հայերնակից- ներուն հետ, իսկ գաւառներէն հասած լուրերն ալ կըսեն, թէ ընթացքի փոփոխութիւնը ակներև է շատ տեղումք։

Բռնեք նաև թէ բուն իսկ մահմետական փո- դովուրդին մէջ ալ նպաստաւոր կարծիքներ կան Եւրոպական միջամտութեան վրա, մահմետական փողովուրդն ալ եթէ չի քաղաքի մեզի պէս, բայց կը կեղեցուի ու ձայն չի կրնար հանել։ Բարեկար- գութիւնները անոնց համար ալ փրկութիւն պի- տի ըլլան։

Մայիս 12/24 ուրբաթ օրը Անգլիոյ թագու- հին ծննդեան տարեդարձն է։ Անգլիոյ Պոլսի գեղապետ մեծ պարտիզանդէս մը (Garden Party) պիտի տայ։ Մատթէոս պատրիարք հրա- ւիրում է, երթալու դիտաւորութիւն ունի, եթէ արգելքներու չի հանդիպի։

Մուշի առաջնորդ Ներսէս վարդապետ խաղա- խանեան, որ բանտարկուած էր, ազատ արձակ- ւելով երէկ Պոլսի հասաւ։
